Գրքերտարքներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀՏՊՄ—33

ՀԵՏԵՎԱԿԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԱՍ 2-ՐԴ

Հրանգային գնդի մոսնագիտական սորտաբա ժանումների տակտիկական խնդիրները (հետախույզ-մարտիկի, հրամատարի ու նրա ջոկի պատրաստությունը)

356
Հ-55

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1933

Թարգմանիչ Գրաբիոս Պատ. խմբագիր Հ. Կիրեյան. Տեխ. խմբագիր Գ. Զեհրան Սրբագրիչ Գ. Աթայան. Հանձնված է արտադրության 10 VIII 1933 թ. Ստորագրված է տպելու 27 XI 1933 թ. Գեհրատի տպարան. Երևան. Պատվեր 1901. Գրավոր 8260 (բ). Հրատ. 26 8. Տրված 1000։

Ua 531
356
Հ-55

01 MAR 2010
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ա. ՄԱՐՏԻԿ-ՇԵՏԱԽՈՒՅՋԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հիմնական նպատակն է՝ պատրաստել հեծյալ դասակի կարմիր բանակայինից մարտիկ-հետախույզ, որն ընդունակ լինի աշխատելու թե՛ ստորաբաժանման կազմով և թե՛ ինքնուրույն:

2. Առաջադրած խնդրի կատարումն ապահովվում է այն խնդիրների պլանաչափ, ուշադիր ու համառ մշակումով, որոնք տրվում են նրան ժամանակակից մարտում:

Մասնագիտական խնդիրն է՝ «հեծյալ պատրաստություն»:

1-ին խնդիր՝ յերթն ու նրա պահպանություն.

2-րդ խնդիր՝ հետախուզություն.

3-րդ խնդիր՝ պաշտպանության կազմակերպություն.

4-րդ խնդիր՝ գործողությունը՝ պաշտպանության մեջ.

5-րդ խնդիր՝ հարձակում.

6-րդ խնդիր՝ մարտիկի աշխատանքը պահպանության մեջ:

42.396
11 JUN 2013

3. Ի տարբերություն հրաձգային ստորաբաժանումների մարտիկի, հեծյալ դասակի մարտիկը յերկրորդ խնդրում անցնում է հետախուզություն: Այդ արված է նրա համար, վոր այն մոմենտին, յերբ զորքերը մշակում են 2-րդ խնդրում պաշտպանությունը, մարտիկը պատրաստ լինի հետախուզությամբ ապահովելու պաշտպանվող զորքերին:

4. Ուսուցումն անց են կացնում ջոկի հրամատարները դասակի հրամատարի անմիջական ղեկավարությամբ: Վերջինս, մարտիկների մեջ ունակություններ մշակելուց առաջ, պարապմունքներ է անց կացնում կրտսեր պետակազմի հետ այս կամ այն նախապատրաստական վարժությունից, կամ հենց պարապմունքներում ցույց է տալիս որինակելի կատարումը, վորից հետո սկսվում է մարտիկների մարզանքը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՀԵԾՅԱԼ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Խնդրի յուրացումն սկսվում է այն մոմենտից, յերբ մարտիկները դուրս են գալիս մեկուսարանից, և ավարտվում է մայիսի 1-ին:

Հետագայում կարմիր բանակայինի ամբողջ ծառայության ընթացքում ընթանում է ավյալ խնդրի նախապատրաստական փորձությունների մեկնաբանված սովորքների ձեռք բերված հղկումը:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ZUUՌ-ԱՐՄ.ՍՍՌ

Խնդրի հիմնական պահանջներն են՝

1. Մշակել մարտիկի մեջ ճկուն, ամուր և անբռնազբոսիկ նստվածք (ձիու վրա), սովորեցնել պահպանել այդ նստվածքը ձիու բոլոր քելքերով շարժումների ժամանակ, ամեն տեսակ տեղանքում և ամեն տեսակ գետնով ընթանալիս ու զանազան խոչընդոտներ հաղթահարելիս:

2. Մշակել ձին հմտորեն ղեկավարելու սովորքներ լրիվ յենթարկելով ձին մարտիկի կամքին. մշակել մարտիկի մեջ ղեկավարման բոլոր միջոցները (մարմնի ներգործությունը, սրունքները, սանձերը) միաժամանակ զուգակցելու հմտություն:

3. Մշակել մարտիկի մեջ իր իրանի շարժումով ձիուն աջակցելու, ինչպես նաև ձիու ուժերը պահպանելու հիմտություն:

4. Սովորեցնել համարձակ, հաշվով ու ստանապրտությամբ հաղթահարել բնական և արհեստական խոչընդոտները:

5. Պատրաստել մարտիկի մեջ համարձակություն, վճռականություն, ստանապրտություն դեպի իր մարտական ընկերը:

6. Մշակել այնպիսի մարտիկ, վորը տիրապետում է ձի հեծած սրազենին և կրակով դիպուկ հարվածում է հակառակորդին:

Նախքան Խնդրի մշակումը, պետք է ծանոթանալ Հեծելազորի շարային կանոնագրքի անհաժեշտ հոդվածների հետ: Խնդիրն անցնելու

հետ զուգընթացաբար անցնում են հատուկ մարմնամարզական վարժություններ, որոնք նպաստում են հեծած ձիավարությունը:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ ստուգել, թե ինչ չափով են կարողանում.

ա) պատրաստել ձիուն հեծած ձիավարությանը.

բ) պահել ճիշտ նստվածք քայլով, վարդով ու արշավով շարժվելիս.

գ) փոխել ուղղությունը բոլոր քելքերի ժամանակ.

դ) կատարել շրջումներ ձի հեծած դեպի աջ ու դեպի ձախ և կարողանալ ձին խաղացնել աջ ու ձախ.

ե) կատարել դարձումներ աջ, ձախ, յետ և առաջ և կարողանալ յետ քաշել ձին ու 3 քայլ մի կոմն ընդունել («հավասար» հրամանով).

զ) հաղթահարել կանոնադրքային խոչընդոտները (ըստ հայեցողության 3–4 տեսակ).

ը) կատարել վոստերի խիզախ թրահատում վարդով ու արշավով.

թ) կատարել խոցումներ վարդով ու արշավով.

ժ) պաշտպանել ձին թն–ից:

Ինդիրը պետք է վերջնականապես մշակված լինի.

ա) մինչև ձմրան շրջանի վերջը «բավարար» գնահատականով.

բ) մինչև ամրան շրջանի վերջը վոչ պակաս, քան «լավ» գնահատականով.

գ) մինչև բանակում դանվելու յերրորդ կիսամյակի վերջը «գերազանց» գնահատականով:

Գնահատականը.— «Գերազանց»— կատարել քննական վարժության բոլոր պահանջները.

«Լավ»—կատարել քննական վարժության 7 պահանջ.

«Բավարար»— կատարել 6 պահանջ:

Անցկացման կարգը. Նվաճումների ստուգումն ըստ մասնագիտական խնդրի, բացառությամբ թրահատման ու խոցումների, անց է կացվում ձիավարժարանում (մանեժ): Ստուգվում է յուրաքանչյուր առանձին մարտիկ, սակայն գործողությունները կարող են լինել խմբակային (որինակ՝ խոչընդոտների հաղթահարումը տոտամ): Պահանջների պրակտիկ կատարման հետ զուգընթացաբար պետք է հետևել ձիավարության անթերի հմտությանը:

Ստուգման ժամանակ կատարման հատուկ մաքրություն (ճշտություն) չպահանջել, վորովհետև մարտիկը ստուգվում է ծառայության առաջին կիսամյակի համար և վերջնականապես հղկման համար նա դեռ բավական-

չափ ժամանակ ունի: Սակայն այդ չպետք է հիմք ծառայի վարժության մեջ մատնանշած գնահատականները մեղմելու համար: Մարտիկը պետք է բոլոր պահանջները կատարի ստույգ ու ճիշտ, բայց առանց հատուկ հրդեհման, և այդ սքանչելի նշան կլինի, վոր մնացած ժամանակամիջոցում հնարավոր կլինի նրանից մշակել ակտիվ, ճարտար ու խիզախ մարտիկ-հեծելակ:

Ձիախաղությունը (վոյլտիժիրովկան) ստուգվում է կարմիր բանակայինի բանակում մնալու յերրորդ կիսամյակից:

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

ա) ձին ու նրա առանձնահատկությունները չճանաչելը.

բ) ձին ղեկավարել չկարողանալը.

գ) Կամարձակության ու ճկունության բացակայությունը.

դ) բոլոր քելքերում ճիշտ նստվածք պահպանել չկարողանալը.

ե) ձիու ու ձիավորի անբավարար մարզվածությունը:

ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-մ. Ունակություններ մշակել ձիու ու ձիասարքի հետ վարվելու համար.

ա) ուսումնասիրել իր ձիու առանձնահատկություններն ու նրա հետ վարվելու կանոնները (կերակրելն ու ջրելը).

բ) մարզանք ձիու ձիատեղից դուրս բերելու մեջ.

գ) մարզանք ձիու մաքրման մեջ.

դ) մարզանք սանձելու ճշտության ու յերեսխնամի հարդարման մեջ.

ե) մարզանք թամքի, գլխանոցի ու դրասարեռի հագցնելու ու քանդելու մեջ, զուգընթացաբար բացատրելով ձիասարքի խնամքի կանոնները.

զ) մարզանք թամբման ու ասպանդակների հարդարման մեջ.

ը) մարզանք սանձած ու թամբած ձին պահելու ու սանձից բռնած տանելու մեջ.

թ) մարզանք ձիու հակազդակը պահելու և նրանից ոգտվելու մեջ:

Վարժության մշակումն սկսվում է այն մոմենտից, յերբ ձին ամրացվում է մարտիկին: Ձին մարտիկի ձեռքը հանձնելով, դասակի հրամատարն անձամբ ծանոթացնում է նրա հատկանշական առանձնահատկությունների հետ, դրա հետ միաժամանակ խորհուրդ է տրվում, թե ինչ միջոցներով ամենից լավ է չեղոքացնել ձիու բացասական հատկությունները, չվատթարացնելով նրա դրական հատկությունները: Բոլոր ձիերի ամրացումից հետո, դասակի հրամատարն անձամբ բացատրում է ձիու հետ վարվելու հիմնական կանոնները, և դրանց ստանալ ձին կերակրելու ու ջրելու մեջ.

Ամենից լավ է, յեթե մարտիկներին այս բոլորը, սկսած իրենց ձիու անունից, նրա առանձնահատկություններից, մինչև նրա հետ վարվելու կանոնները ներառյալ, գրի առնեն իրենց ծոցատետրերում:

Դրանից հետո հարկավոր է անցնել ձիու հետ վարվելու հետևողական և սկզբնական չրջանում սիստեմատիկ մարզանքին:

Ձիու հետ վարվելու յուրաքանչյուր նվագ, թեկուզ և դա ամենապարզ նվագը լինի, սկզբում պետք է ծանոթացնի հրամատարը, և ապա, պահպանելով ձիու խնամքի բոլոր կանոնները, մարզվում է մարտիկը, կատարելով յուրաքանչյուր նվագ մի քանի անգամ (սակայն առանց հոգնեցնելու ձիուն): Հետագայում այդ մարզանքն անցնում են ձիու հետ առորյա աշխատանքի կարգով:

Վարժությունն ավարտվում է ստուգումով, թե ի՞նչ չափով հմտությամբ են կարողանում կատարելապես վարվել ձիու հետ:

Գնահատականը.—«Գերազանց»— անսխալ կատարել վարժության բոլոր պահանջները.

«Լավ»—կատարման ժամանակ ստանալ վոչ ավելի, քան մեկ ուղղում.

«Բավարար»— նույնը՝ վոչ ավելի, քան 2 ուղղում:

Բոլոր դեպքերում մարտիկը պետք է հաստատապես գիտենա ձին կերակրելու ու ջրելու կանոնները թե տեղում և թե չարժման ժամանակաշրջանում:

2-մ. Ունակություններ մշակել թամքի վրա ճիշտ նստվածքի, յերասանակների տիրապետման ու ձիուց իջնելու համար:

Նախ քան մարզանքը, հրամատարը ցույց է տալիս ճիշտ նստվածքն ու իջնելը, վորից հետո յուրաքանչյուր մարտիկ կատարում է նույնը: Մարտիկների բոլոր գործողությունները կատարվում են հրամատարի հրամանով: Նրանից հետո, յերբ մարտիկները կյուրացնեն նստվածքի և իջնելու հիմնական կանոնը, հետագայում մարզանքը տեղի յի ունենում մարտիկի ամենորյա ծառայության ընթացքում:

3-մ. Ունակություններ մշակել հմուտ, ճարտար ու ակտիվ ձիավարության և ձիու ղեկավարման որինակելի յեղանակների համար.

ա) մարզանք արագ չարվելու, հավասարվելու և հերթափոխի մեջ համրանքի ըստ ույգության մեջ, ձին պահելով յերասանակը բռնած և ձի հեծած.

բ) մարզանք հերթափոխում ձգվելու ստույգության և աջից կամ ձախից կատարած կանչով հերթափոխից անջատելու հմտության մեջ.

գ) մարզանք ճկուն, ամուր ու անբռնադրոսիկ նստվածքի մշակման մեջ.

դ) մարզանք չարժման ժամանակ ճիշտ նստվածք պահպանելու մեջ.

ե) նույնը՝ վարժական արշավով.

զ) նույնը՝ ձիավարժարանի ու դաշտային վարդով:

ը) մարզանք վստահ՝ հեծած ձիավարութեան մեջ ուղիղ ուղղությամբ, քայլով, վարդով ու արշավով.

թ) մարզանք բոլոր քելքերից ուղղությունը փոխելու մեջ ձիավարժարանի մեջտեղով և անկյուններից.

ժ) մարզանք ատաղ կազմելու մեջ դեպի աջ, դեպի ձախ, դեպի յետ և ձի խաղացնելու հմտության մեջ աջ ու ձախ.

ի) մարզանք աջ, ձախ, առաջ ու յետ դարձումների մեջ և ձին յետ տալու ու 3—6 քայլ մի կողմ ընդունելու հմտության մեջ («հավասարվիր» հրամանով):

Վարժությունը հանդիսանում է հիմնական վարժություն մարտիկ հեծելակի հեծյալ պատրաստության սիստեմում:

Վարժության նպատակն է՝ տալ որինակելի ձիավոր, վորը կատարելապես տիրապետում է իր ձիուն վորպես մարտական զենքի:

Վարժության վերոհիշյալ պահանջներն անց են կացվում խստիվ հաջորդականությամբ ամրան շրջանում և յերկնականապես ամրացվում են սիստեմատիկ մարզանքով մարտիկի ամբողջ ծառայության ընթացքում:

Հեծյալ ձիավարության ունակությունների մշակման հետ միաժամանակ որը-որին ունակություններ են պատվաստում ձիու որինակելի դեկավարման համար:

Ձին վարելու տարրական սովորքները (ձին առաջ ուղարկելու, կանգնեցնելու և մի կողմ ընդունելու հմտությունը) մշակվում և շարափոխումների ու հավասարվելու մարզանքի հետ միաժամանակ:

Ձին վարելու լիակատար մշակումը հարկավոր է անցնել նրանից հետո, յերբ մարտիկները կվարժվեն ճիշտ և ամուր նստել թամքի վրա:

Ձին վարելու բոլոր գործողություններն անհրաժեշտ է սկսել որինակելի ցուցադրանքից և յուրաքանչյուր նվազի բացատրությունից: Սովորեցնելով ձին վարել, մարտիկների հատուկ ուշադրությունը պետք է դարձնել դեկավարման բոլոր միջոցների (մարմնի թեքումները, սրունքների ու յերասանակների գործողությունները) համաձայնեցրած գործողությունների վրա: Միայն նրանից հետո, յերբ մարտիկները կհասկանան ցույց տվածը, անցնել մարզանքին, մարզանքն սկսելով ուղղակի ուղղությամբ շարժումից, պարտադիր կերպով շուռ տալով ձիերը ձիավարժարանի անկյունները: Հետագայում մարզանքն անց է կացվում նույն քելքերով, բայց փոխելով ուղղությունները և տեղում կատարած դարձումներով (յետևից ու առջևից), աստիճանաբար

ավելացնելով անկյունները 45-ից մինչև 90 և հասցնելով մինչև 180 աստիճանի:

Ավելի նուրբ ձիավարության մշակումը կատարվում է ձին խաղացնելու, դարձումների, յետ տալու, կանգառումների, նորից շարժման անցնելու մարզանքի ժամանակ՝ զանազան ուղղություններով՝ դասավորված հաստոցների ու խոչընդոտների միջև, անցնելով մի քելքից մյուսին:

Ձիավարության ունակությունների վերջնական ամրացումը կատարվում է դաշտում տակտիկական պարապմունքների շրջանում: Հանձնարարվում է տվյալ վարժության պահանջների սերիաների մշակման հետ հետզհետե կատարել ստուգողական քննություններ, գնահատելով աշխատանքը՝ համաձայն 1-մ. նախապատրաստական վարժության գնահատականի:

4-մ. Ունակություններ մշակել հաղթահարելու համար կանոնագրքային չափի խոչընդոտները.

Տվյալ վարժության հիմնական նպատակն է՝ մշակել յուրաքանչյուր կարմիր բանակայինից համարձակ, խիզախ, իր հաշիվն իմացող ու վստահ մարտիկ:

Ուսուցումն սկսել 2-3 ձողի հաղթահարումից, վորոնք դրված են ձիավարժարանի դետնի վրա, կատարելով այդ ամբողջ հերթափոխին տալ վրա առանց ասպոնդակների, ցած թողած (կապած) յերասանակներով:

Ձեռքերի դրությունը՝ մի կողմի վրա, վեր բարձրացրած կամ մեջքին դրած: Այնուհետև դրվում են 2-3 տեմպի ստեղներ (կլավիշներ) վոչ ավելի, քան 30 սանտիմետր բարձրությամբ: Ցերը մարտիկները հաստատապես կհաղթահարեն վերոհիշյալ խոչընդոտները, կարելի յե անցնել առանձին ավելի բարդ խոչընդոտների հաղթահարման 50-ից մինչև 70 սանտիմետրի, սկզբում վայր ընկնող (խերդել, բարտրիպլ և այլն) և այնուհետև անշարժ (մեռյալ) խոչընդոտների:

Ավարտելով մարտիկի ու ձիու ամենապարզ և հատ-հատ խոչընդոտների հաղթահարման վարժությունը, անցնել 80 սմ. բարձրությամբ խոչընդոտների հաղթահարմանը (պարկուրա):

Ցերը ձիավորը մոտենում է խոչընդոտին, հետևել, վոր մարտիկը ձին տանի սրունքներով ու յերասանակներով, կանխելու համար խրտնելն ու մի կողմի վրա շրջանցելը: Խոչընդոտի առաջ ձիու կանգառման դեպքում, պահանջել մարտիկից՝ յեռանդուն ձևով ներդրծել ձիու վրա ղեկավարության իր ունեցած բոլոր միջոցներով:

Խոչընդոտների հաղթահարումը սովորեցնելիս, հատուկ ուշադրություն դարձնել նրա վրա, վոր ձին, խոչընդոտին մոտենալիս, մար-

տիկի մեջ մշակի համաձայնություն իրեն ու զոտակատեղը ճիշտ առաջ տալու, յերասանակները ճիշտ ձգելու և սրունքների ու մարմնի ավելորդ շարժումները վերացնելու համար, վորոնք խանգարում են ձիու ցատկելուն:

5-մ. Մշակել խիզախ թրահատումների ու խոցումների ունակություններ:

Վարժության նպատակն է՝ մշակել հաստատակամ մարտիկ, վորն ընդունակ է ձի հեծած ջանքախիչ հարված հասցնել սրաձենով:

Մարզանքը հարկավոր է սկսել թրի շեղքն առաջ տանելուց, հետիոտն շարքով հարված հասցնելուց ու խոցումից: Այնուհետև անցնել թրահատման ու խոցումներին վայտե ձիուց (պատրաստված պրիմիտիվ ձևով): Երանից հետո, յերբ մարտիկը կվարժվի ուժեղ ու ճիշտ հարվածներ հասցնել հետիոտն շարքով ու վայտե ձիուց, անցնել վոստերի թրահատման ու խոցումների ձին հեծած սկզբում՝ քայլով, այնուհետև՝ վարդով և ապա՝ արշավով:

Թե՛ հետիոտն շարքով և թե՛ ձի հեծած պահանջել ուժեղ, հատող հարված, ըստ վորում հատուկ ուշադրություն դարձնել յեռանդուն և ճիշտ հարվածի վրա:

6-մ. Ունակություններ մշակել ձիախաղացության հմտության վրա՝ վարժական ու շարքային թամբերից, զենքով և առանց զենքի:

Վարժության նպատակն է՝ մշակել համարձակ մարտիկ, վորն ընդունակ է ձիու ամեն տեսակ շարժման ժամանակ ցած իջնել ձիու վրայից ու ցատկել թամբի վրա թե՛ անհատական ձիավարության և թե՛ խմբակային կարգով:

Ձիախաղացության առաջին նվաճներն անցնում են վարժական (ձիախաղացության) թամբից՝ վարդով: Այդ ժամանակ մարտիկից անհրաժեշտ է պահանջել ճիշտ մոտեցում դեպի ձին, ստույգ վազք ձիու հետ համընթաց քայլով, մարմնի ճիշտ դրություն ու ձեռքերի ճիշտ դրություն թամբի վրա, կակուղ հրում վոտքերի ծայրերին և սահուն իջեցում թամբի վրա: Մարզանքի ընթացքում մշակել թամբի վրա ճիշտ դրություն. վարդով ձիախաղացության նախնական յեղանակները յուրացնելուց հետո, ուսուցումն անցկացնել արշավով, միաժամանակ պահանջելով մկրատի և մարմնամարզական վարժությունների կատարում: Վարժական թամբի վրա ուսուցումն սկզբում անցկացնել առանց զենքի և ապա՝ զենքով:

Յերբ մարտիկները բավականաչափ կյուրացնեն նվաճները վարժական թամբի վրա, անցնել ձիախաղացության շարային թամբի վրա, սկզբում առանց զենքի ու դրաստաբեռի (վարդով ու արշավով) և ապա զենքով ու դրաստաբեռով:

7-մ. Ունակություններ մշակել ձին Թն պաշտպանելու համար:

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ձիուն հաղցնել հակազդը, հանել ու պահել

հակագազը, ինչպես նաև ոգտագործել մաշկի պաշտպանության միջոցները։ Վարժության մշակման ժամանակ ոգտվել «Կարմիր բանակայինի հակաքիմիական պաշտպանության կազմակերպումն ու մեթոդիկան» տվյալներից։

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ (մարտիկ)

ՑԵՐԹՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախ քան խնդրի մշակումն ու խնդրի մշակման հետ զուգընթացաբար մարտիկները ծանոթանում են ԿՄԾ 7–21 հոդվածների բովանդության հետ, Հեծելազորի շարային ու մարտական կանոնագրքերի անհրաժեշտ հոդվածների և «Կարմիր բանակայինի հակաքիմիական պաշտպանության կազմակերպումն ու մեթոդիկան» համապատասխան հրահանգների բովանդակության հետ։

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1. Ստուգել, թե մարտիկն ինչ չափով է կարողանում.

ա) պատրաստվել ու պատրաստել ձին յերթի համար.

բ) կատարել վերաշարումներ.

գ) պահպանել քելքը.

դ) հաղթահարել վերելքներն ու վայրէջքները.

ե) ճիշտ հագցնել հակագազը ձիուն և վարել հակագազ հագցրած ձին.

ը) կատարել դիտակալի պարտականությունները յերթում.

թ) ձի հեծած շարժվել ձյունի ու սառույցի վրա.

ժ) պաշտպանել իրեն ու ձիուն պավառնակից շաղ տրվող թն-ից.

2) Ստուգել, թե ինչ չափով մարտիկը գիտե.

ա) ԿՄԾ 8, 13, 14 և 21-րդ հոդվածները.

բ) ձիապանի պարտականությունները.

գ) Հեծելազորի մարտական կանոնագրքի ու Շարային կանոնագրքի անհրաժեշտ հոդվածները։

Գնահատական.— «Գերազանց»—կատարել քննական վարժության բոլոր պահանջները, [illegible]անալով վոչ ավելի, քան մեկ ուղղում.

«[illegible]ավ»— վոչ ավելի, քան 2 ուղղում.

«[illegible]ուրաբ»—վոչ ավելի, քան 3 ուղղում.

«Բավ[illegible] վարժության ժամանակ գնդի քննական [illegible] համար նշանակված հեռավոկամ գումարտակ[illegible] գումը բոլոր դեպքերում [illegible]թյան հաղթահա[illegible] ողջ դրությամբ բերելու պարտադիր է, ձին առ[illegible] պայմանով։

Կատարման կարգը։ Վա[illegible]ժությունն անց է կացվում նրանից հետո, յերբ [illegible] յուրացված են բոլոր նախապատրաստական վար[illegible]ժությունները։ [illegible] մարտիկը։ Ստուգումը կատարվում է բոլոր

ների նկատմամբ այն կետերից, որոնք բերված են քննական վարժության մեջ, ըստ որում կետերի մի մասը կարող է ստուգվել ամբողջ զորամասի (գնդի) յերթի շրջանում:

Մնացած կետերից գործողությունները ստուգվում են հատուկ նշանակված ժամանակ: Պարապմունքները ստուգվում են զուգընթացաբար:

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

ա) անվուլթ պատրաստությունը յերթի համար.

բ) անուշադրությունը դեպի հրամանները.

գ) ձին զեկավարելու անբավարար հմտությունը.

դ) ձիու համար քողարկման որյեկտներ հանդիսացող որյեկտներն ոգտագործել չկարողանալը.

ե) դիտողության անբավարար զարգացումը պահպանության մեջ շարժվելու ժամանակ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր.— 1–ա (ա), 1–բ (բ), 1–գ (գ), 1–դ (դ), 1–ե (ե), 1–զ (զ), 1–ժ (ժ), 1–ծ (ն) (տես ՀՏՊՄ—33, մասն 1–ին).

Մասնագիտական.

1–ամ (աս). Ունակություններ մշակել յերթի պատրաստվելու համար.

ա) մարզանք իր ձին զննելու և թաբվածքի ճշտությունը ստուգելու մեջ ցերեկով ու գիշերով.

բ) մարզանք զրաստաբեռը սարքելու և թամբի վրա բարձելու մեջ.

գ) մարզանք զրաստաբեռի ծանրությունը հավասարաչափ բաշխելն ստուգելու մեջ:

Վարժությունն անց է կացվում մի այլ ընկերոջ կողմից յերթի համար պատրաստած ձին՝ հրամատարի ներկայությամբ զննելու միջոցով: Հրամատարը պետք է ինքը համոզվի, վոր ձին ճիշտ է պատրաստված և կարողանա հայտարերել թերությունները: Մի քանի մարզանքից հետո այդ վարժությունն անց է կացվում ամեն անգամ պարապմունքի դուրս գալիս, բայց արդեն իր ձիու վրա: Հրամատարները պետք է պարբերաբար վերահսկեն այդ աշխատանքին:

1–բմ (բս). Մշակել ունակություններ հրամաններն արագ, ճարտար կատարելու համար յերթից առաջ շարումների ու յերթի միջոցին վերաշարումների ժամանակ.

ա) մարզանք շարժման ու հավասարման արագության մեջ.

բ) մարզանք ձի նստելու ու ձիուց իջնելու մեջ ջոկի ու դասակի շարքում.

գ) մարզանք ջոկի բացաղատված շարքից ոգակաշարի շարքերի ու միաշարի անցնելու մեջ.

դ) մարզանք հեռակայությունն ու հավա-

սարքումը պահպանելու մեջ ցերեկով ու գիշերով շարժման ժամանակ։

Վարժությունն սկզբում անց է կացվում առանձին մարզական պարապմունքներում և ապա՝ 1–դմ(վս) նախապատրաստական վարժության մշակման հետ զուգընթացաբար։

1–գմ (վս)։ Մարտիկի ու ձիու՝ յերթին վարժվելը։

Վարժությունն անց է կացվում մարտիկի ամբողջ ծառայության ընթացքում՝ ճանապարհներով և առանց ճանապարհների, հարթ ու կտրտուկ տեղանքով, դաշտերով ու անտառներով, ցերեկով ու գիշերով, բոլոր քելքերով։ Մարզանքն սկսել փոքր հեռակայություններից և հասցնել մինչև լրիվ որաղնացքի, ոգտագործելով այդ նպատակի համար պարապմունքները դուրս գալու և պարապմունքներից վերադառնալու ժամանակը։ Վոչ մի բոպե չպիտի անցնի սապարդյուն։ Հատուկ ուշադրություն պետք է նվիրել քելքը խստիվ պահպանելու հմտության վրա (քայլով շարժվելիս, չվարգել, վարգով շարժվելիս, չարշավել)։

1–դմ (գս)։ Մշակել ունակություններ զանազան ուղղորդության վերելքներ ու վայրեջքներ հաղթահարելու համար։

Մարզանքը կատարվում է դաշտում ընդարձակ տեղանքում և սկսվում է հաղթահարման ճարտարության վերաբերյալ հրամատարի ցուցադրանքից։

1–եմ (դս)։ Մշակել ունակություններ ձին ոդային հակառակորդից ֆողարկելու համար՝ շարժման ու կանգառումների ժամանակ։

Վարժությունը մշակվում է ԿՄԾ 61—62 հոդվածների համեմատ։

1–զմ (ես)։ Մշակել ունակություններ ձիապանի պարտականություններ կատարելու, փոքր ու մեծ դաղարքներում ձիու հետ վարվելու համար։

Մարզանքին նախորդում է կանոնների բացատրությունը, և այնուհետև կանգառումների ժամանակ ջոկի մարտիկները հերթով վարժվում են կատարելու ձին փոքր ու մեծ դարդաքներում պահելու պարտականությունները։

1–ըմ (ժս)։ Մշակել ունակություններ ձմրան ճանապարհներով ու զանազան խորության չտրորած ձյունով շարժվելու համար։

Մարզանքին նախորդում է շարժման կանոնների պարզաբանումը և ապա տեղի յե ունենում մարզանքը ձյունի վրայով,—սկզբում սաղը և ապա խոր ձյունով, փոքր ու մեծ դաղարքներում, մեծ ուշադրություն դարձնելով ձին թեթևացնելու վրա, և թույլ չտալով մարդանք այն շրջանում, յերբ ձյունը սառցապատվում է։

1–թմ (զս)։ Մշակել ունակություններ սառույցի վրայով շարժվելու համար։

Մարզանքի համար անհրաժեշտ է սարքավորել փոքր սառցապատ հրապարակ։ Մարզանքն սկսել ձին վարժեցնելուց (սանձը ձեռ-

գին բռնած), հաղթահարելով սառույցի մակերեսը: Այնուհետև յերբ ձին կսկսի վստահորեն շարժվել սառցապատ հրապարակում, այն ժամանակ անհրաժեշտ է սկսել մարզել մարտիկին սառույցը՝ ձի հեծած հաղթահարելու մեջ:

1-ին (իս). Մշակել ունակություններ արագ հակագազ հագնելու և ձիուն հագցնելու համար և մարզանք հակագազ հագած շարժման մեջ:

Վարժությունն անց է կացվում 1-ին (վս) վարժության հետ զուգընթացաբար:

Հիմնական նպատակ ունենալ՝ մշակել մարտիկի մեջ ունակություններ հակագազ հագած չնչելու համար, առանց զգալիորեն բարձրացնելու զարկերակը. ձիու մեջ ունակություններ մշակել վերացնելու հմտար վախկոտությունը և վարժեցնելու նրան վստահորեն շարժվել հակագազը հագին քայլով և այնուհետև՝ թեթև վարդով:

1-ին (կս). Ունակություններ մշակել յերթական պահպանության մեջ ցերեկով ու գիշերով դիտակալի պարտականությունների կատարման համար:

ա) դիտակալի շարժումը.

բ) գործողությունները հակառակորդի հետ հանդիպման ժամանակ.

գ) ձեռք բերած տեղեկությունները հակառակորդի մասին տեղ հասցնելն ու իր պետին հանձնելը.

Գործնականում մշակել ԿՄԾ 18-20-րդ հոդվածները:

Հակառակորդի մասին ձեռք բերած տեղեկությունները կանոնադրքային շարադրության մարդանքն անհրաժեշտ է գործադրել յուրաքանչյուր հարմար դեպքում մարտիկի ամբողջ ծառայության ընթացքում:

1-ին որինակ.— «Գտնվելով դետքում, դուք նկատել եք հակառակորդի զորասյունի շարժումը մոտ մեկ դումարտակ ուժով՝ հրամանու հետ:

Զորասյունը շարժվում եր արևմուտքից դեպի արևելք: Ընկ. Սիդորո՛վ, զեկուցե՛ք:

— Ընկեր հրամատա՛ր, մոտենալով կանաչ տնակին, տեսա հակառակորդի մեծ զորասյունի շարժում:

— Ցեվ ուրիշ վոչի՞նչ:

— Ուրիշ վոչինչ յես չտեսա:

— Վո՛չ: Ընկ. Սեմոնյով, դուք յեղել եք դետքում:

Սեմյոնովը ճիշտ է զեկուցում:

2-րդ որինակ. «Գտնվելով դետքում, ձեզ զնդակոծեց ձեռքի զնդացիրն առանձին ծառի մոտից: Այդ ժամանակ մոտ մի դասակ ուժով հեծյալ դետքը գած եր ինչնում այս-ինչ հեղեզատը»:

— Ընկ. Սիդորո՛վ, դուք դետքումն եյիք. զեկուցեք:

— Ընկ. հրամատար, առանձին ծառի մո-

տից մեկ զնդակոծեցին զնդացրերով։ Զորակ իջավ հակառակորդի հեծելազորը։

— Ընկ. Բելո՛վ, ճի՞շտ զեկուցեց արդյոք ընկ. Սիդորովը, թե վոչ։

— Վո՛չ։

— Զեկուցե՛ք դուք։

Այսպիսով, շարժման ժամանակ ու տեղում, ինչպես նաև զորանոցում, ճիշտ կրկնելու կարճ թռուցիկ խնդիրների պրակտիկայով պետք է հասնել նրան, որ անթերի ճշտությամբ չարադրվեն ձեռք բերված տեղեկությունները, այլ կերպ ընկ. Սիդորովի սխալ հայտնված տեղեկությունները հրամատարի մեջ սխալ պատկերացում կստեղծեն իրականության մասին։ Գալիս է հեծելազորը—իսկ ինչ ուժեր են, ուր է գնում և այլն։ Զորակ իջավ հեծելազորը—իսկ ինչ թվով է և այլն։

1-լմ (լս). Մշակել ունակություններ ավիաքիմհարձակումից պաշտպանվելու համար։

Վարժության նպատակն է՝ սովորեցնել մարտիկին պաշտպանվել ավիաքիմհարձակումից, պաշտպանել դրանից ձիուն և առաջին ոգնությունը ցույց տալ կայուն թն վնասվելու դեպքում։

Վարժությունն անցկացնել, ոգտագործելով հակագազեր, թիկնոցներ և ձեռքի տակ միջոցներ (դրատ և այլն)։

ԽՆԴԻՐ ՅԵՐԿՐՈՐԴ (հեծդասակի մարտիկ)

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Նախ քան խնդրի մշակումը և խնդրի մշակման հետ զուգընթացաբար պետք է մարտիկներին ծանոթացնել ԿՄԾ 56–59, 61–68 հոդվածների բովանդակության հետ, Հեծելազորի մարտական կանոնագրքի 1-ին մասի անհրաժեշտ հոդվածների և «Կարմիր բանակայինի ռազմաքիմիական պատրաստության կազմակերպումն ու մեթոդիկան» համապատասխան հրահանգների բովանդակության հետ։

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1. Ստուգել, թե ինչ չափով է մարտիկը կարողանում.

ա) հաջորդաբար նշել դիտողության համար կետեր և գտնել դեպի այդ կետերը ծածկված ուղիներ.

բ) դիտել տեղից ու շարժման մեջ.

գ) վորոշել հակառակորդի ներկայությունն ու գործողությունները ըստ ռազմական հատկանիշների.

դ) տեղ գտնել դարանի համար.

ե) կատարել տեղական առարկաների մանրամասն զննություն.

զ) ճիշտ գործել հակառակորդի հետ հանդիպման ժամանակ։

ը) վորոշել թն հոտառությամբ և վարել քիմհետախուզություն.

թ) կողմորոշվել տեղանքում դիշերով։

ժ) վարել հետախուզությունը դիշերով։

ի) գրել զեկուցագիր կամ բանավոր զեկուցել։

2։ Ստուգել, թե ինչ չափով գիտե մարտիկը ԿՄԾ 56–59, 61–68 հոդվածները։

Գնահատականը։—«Գերազանց»—կատարել քննական վարժության բոլոր պահանջները և ստանալ հրամատար-զեկավարից վոչ ավելի, քան մեկ ուղղում։

«Լավ»— վոչ ավելի, քան 2 ուղղում։

«Բավարար»— վոչ ավելի, քան 4 ուղղում։

Անցկացման կարգը։ Ստուգվում է յուրաքանչյուր առանձին մարտիկ՝ հետախուզության մեջ ջոկի գործողության ֆոնի վրա։ Զեկավարը, ստուգելով մի դիտակալի, փոխում է նրան մի ուրիշ դիտակալով և այլն։ Ցերբ հարկավոր է, նա կանգնեցնում է շարժումը և ստուգում է բոլոր մարտիկներին մի վորևե կետից, որինակ՝ դարանի համար տեղ ընտրելը, գործողությունները հակառակորդի հետ հանդիպելիս և այլն։

Գիտելիքները ստուգվում են պրակտիկ կատարման ստուգման հետ զուգընթացաբար։

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել։

ա) դիտակետերն ու դեպի նրանց տանող ուղիները վորոշել չկարողանալը։

բ) անուշադրությունը դիտելիս, շարժման ժամանակ և տեղական առարկաները զննելիս։

գ) չվոթվածությունը գործողություններում՝ հակառակորդի հանկարծակի հայտնվելու դեպքում։

դ) անբավարար մարզվածությունը մարտիկ-հետախույզի առանձին գործողությունների կատարման մեջ։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2–ամ (աս)։ Մշակել ունակություններ մի շարք դիտակետերի և մի դիտակետից դեպի մյուսը շարժման ուղիների ընտրության համար։

2–բմ (բս)։ Մշակել ունակություններ տեղից ու շարժման ժամանակ դիտելու տեխնիկայի մեջ։

2–գմ (գս)։ Ունակություններ մշակել հետախուզության նպատակների համար կարևոր հատկանիշների ոգտագործման համար։

2–դմ (դս)։ Մշակել ունակություններ արևով ու աստղերով, կողմնացույցով ու քարտեզով տեղանքում կողմորոշվելու համար։

2–եմ (դս)։ Մշակել ունակություններ գիշերով հետախույզների գործողության համար։

2–զմ (ես)։ Մշակել նարտարություններ դարաններ կառուցելու համար հակառակորդի հետախույզներին գերի վերցնելու կամ նրանց վոչնչացնելու նպատակով։

2–ըմ (ժս)։ Մշակել ունակություններ այն-

պիսի տեղական առարկաների գնության համար, վորտեղ կարելի է սպասել հակառակորդի դարաններ.

Ծանոթություն: 2-ամ (աս) մինչև 2-ըմ (ժս) նախապատրաստական վարժություններն անց են կացվում մարտիկի համար 9-րդ խնդրի (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին 9-ա (ա), 9-բ (բ), 9-գ (վ), 9-դ (գ), 9-ե (դ), 9-զ (ե), 9-ը (ժ) նախապատրաստական վարժությունների ճիշտ նմանությամբ, այն տարբերությամբ միայն, վոր աշխատանքը կատարվում է վոչ թե հետիոտն շարքով, այլ հեծյալ շարքով:

2-բմ (զս). Մշակել ունակություններ հետախուզության մեջ թշնամու հետ հանդիպման ժամանակ գործելու համար.

Վարժությունը մշակվում է ճիշտ 9-դ (դ) նախապատրաստական վարժության հրամեմատ (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին), բայց ավելացնելով ձի հեծած յեռանդուն գրոհի նեռման ունակություններ մշակելը՝ հակառակորդին գերելու կամ վոչնչացնելու նպատակով:

Գրոհի ունակությունները պատվաստվում են դաշտում միջանկյալ խնդիրներ տալու միջոցով, թե այս-ինչ թուփը հանդիսանում է մեկական կամ յերկակի դիտակալ, ըստ վորում ոժանդակ թռուցիկ խնդիրների կատարումն անհրաժեշտ է գործադրել մարտիկներից միանգամայն հանկարծակի ձևով:

2-ժմ (իս). Մշակել ունակություններ թն հոտառությամբ վորոշելու և վարակված տեղամասի քիմհետախուզություն կատարելու համար:

Մարդանքի նպատակով վերցնում են վարժական թն և լցնում են մի քանի տեղ, այնուհետև մարտիկներն մեկ-մեկ հոդով բաց են թողնում վարակված տեղամասից, մշակելով քիմհետախուզության հարցերը:

2-իմ (կս). Մշակել ունակություններ արագ ու ծածկված հեծելադետրի հավաքակայանը հավաքելու համար հրամատարի սահմանած ազգանշանով:

Վարժությունն անցկացվում հետախուզության մեջ մարդանքի հետ զուգընթացաբար. ըստ վորում ջոկի հրամատարն, ամեն անգամ սահմանելով հավաքի համար ազդանշանը, վոչ պակաս, քան մի անդամ հավաքում է դիտակալներին և այդպիսով իսկ կատարում է հավաքի մարդանքի պահանջները և միաժամանակ հնարավորություն է տանում նշելու ու վերացնելու մարտիկների այն սխալները, վորոնք թույլ են տալիս հետախուզության մեջ գործողությունների ժամանակ:

2-լմ (լս). Մշակել ունակություններ զեկուցագրեր գրելու տեղ հասցնելու համար:

Զեկուցագրեր գրելու ունակությունների մշակումն ընթանում է ԿՄԾ 68-րդ հատվածի հիման վրա: Զեկուցագրերը պատրաստելու մարդանքն անհրաժեշտ է սկսել դասարանում, մինիատյուր-պոլիգոնի վրա պարապմունքից և

ապա տեղափոխել իսկական տեղանքը, հետախուզության գործողությունների ուսուցման ընթացքում: Զեկուցագրեր տեղ հասցնելու մարդանքով հասնել նրան, որ յուրաքանչյուր մարտիկ հաստատապես յուրացնի, թե ուր ե տարվում զեկուցագրով ծրարը, ում ե տրվում ճանապարհին կարդալու, ինչպես և ում ե հանձնվում: Առանձնապես նա պետք ե գիտենա զեկուցագրով հրամատարական կետին մոտենալու կարգը:

Որպես կանոն, զեկուցագրեր բերող մարտիկը պետք ե կարողանա քարտեզի վրա ցույց տվյալ նախապատրաստական վարժությունը,

ԽՆԴԻՐ ՅԵՐՐՈՐԴ (հեծդասակի մարտիկ)

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մշակվում ե 2-րդ խնդիրը (մարտիկի համար) ՀՏՊՄ-33, 1-ին մասով:

ԽՆԴԻՐ ՉՈՐՐՈՐԴ (հեծդասակի-մարտիկ)

ՄԱՐՏԻԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մշակվում ե 3-րդ խնդիրը (մարտիկի համար) ՀՏՊՄ-33, 1-ին մասով, ավելացնելով մի նախապատրաստական վարժություն ըստ մասնագիտության:

4-ամ(աս). Մշակել ունակություններ ապրագ հետիոտն մարտի և ընդհակառակը հեծյալ մարտի անցնելու համար:

Վարժությունը մշակվում ե, յերբ դաշտեն դուրս գալիս յուրացնելու համար 3-րդ ու 4-րդ խնդիրները, վորտեղ պաշտպանության յուրաքանչյուր նախապատրաստական վարժության մշակումից առաջ անպայման մշակել տվյալ նախապատրաստական վարժությունը, լուծելով կարճ թռուցիկ խնդիրներ. որինակ՝ «Ջոկին հրամայված ե պաշտպանել կամուրջը մինչև հետևակի առաջավոր մասերի մոտենալը: Կամուրջին 500 մետր մոտենալիս, նկատված ե հակառակորդի առանձին խմբակների շարժումը. հրաման՝ «ինչ ե՛ք. արագ դրավել կամուրջի առջևի բլրակները»: Հակառակորդը յետ ե մղված: Մոտեցավ մեր հետևակը: Հրաման՝ «հեծի՛ր»: Նման կարճ թռուցիկ խնդիրները հնարավորություն կտան պաշտպանության հետ միաժամանակ կատարելապես մշակել հետիոտն մարտից հեծյալ և, ընդհակառակը, հեծյալից հետիոտն մարտի անցնելու հարցը:

ԽՆԴԻՐ ՉԻՆԳԵՐՈՐԴ (հեծդասակի մարտիկ)

ՀԱՐՁԱԿՈՒՄ

Մշակվում են 4-դ(վ), 4-ե(դ), 5-ա(ա), 5-գ(վ), 5գ(ե), 5-ի(կ) (մարտիկի համար) նախապատրաստական վարժությունները ՀՏՊՄ-33, 1-ին մասով:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն ե՝ 1. Սովորել, թե ինչ չափով են կարողանում.

ա) հաղթահարել կայուն ԹՆ վարակված շերտերը.

բ) հաղթահարել այն տեղերը, որոնք դնդակոծվում են հակառակորդի հրետանով:

գ) ոգտագործել տեղանքը դեպի թշնամին ծածկված առաջ շարժվելու համար.

դ) ոգնել իրեն և իր ընկերոջ վիրավորվելիս.

ե) հաղթահարել ջրային խոչընդոտները.

2. Ստուգել, թե ինչ չափով գիտեն ԿՄԾ 5, 37, 46, 42 հոդվածները:

Գիտահատականը.— «Գերազանց»— կատարել քննական վարժության բոլոր պահանջները.

«Լավ»— կատարել քննական վարժության պահանջները, ստանալով հրամատար—դեկավարից վոչ ավելի, քան 2ուղղում.

«Բավարար»— նույնը՝ վոչ ավելի, քան 3 ուղղում:

Գիտելիքները ստուգվում են գործողությունների ստուգման հետ զուգընթացաբար:

Անցկացման կարգը: Ստուգումը կատարվում և դաշտում պրակտիկ խնդիրների լուծման միջոցով՝ յուրաքանչյուր առանձին կարմիր բանակայինի գործողությամբ:

ԽՆԴԻՐ ՎԵՑՆԵՐՈՐԴ (հեծդասակի մարտիկ)

ՄԱՐՏԻԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մշակվում է 11-րդ խնդիրը (մարտիկի համար) ՀՏՊՄ -33, 1-ին մասով:

Բ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՈՒ ՆՐԱ ՋՈԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հիմնական նպատակն է՝ պատրաստել ջոկի հրամատարին հեծյալ հետախուզության գերազանց կազմակերպչի ու ղեկավարության դերի համար և այդ հիման վրա ունենալ ջոկի ամբակուռ կոլլեկտիվ, որն ընդունակ է աշխատելու թե՛ ամբողջ ջոկով և թե անհատապես:

2. Առաջադրած խնդրի կատարումն ապահովվում է ժամանակակից մարտում նրանց վրա դրվող խնդիրների պլանաչափ, ուշադիր ու համառ մշակումով:

Մանագիտական խնդիրն է՝ «Հեծյալ պատրաստություն».

1-ին խնդիր—յերթն ու նրա պահպանությունը.

2-րդ խնդիր— հետախուզություն կազմակերպելն ու վարելը.

3-րդ խնդիր— պաշտպանության կազմակերպումը.

4–րդ խնդիրը—Ջոկի գործողությունները պաշտպանության մեջ.

5–րդ խնդիրը—հարձակումը դնդացրային ու հրաձգանային գործոն կրակի վոլորոտում մինչև գրոհի յելման դրություն դրավելու մոմենտը:

3. Բոլոր խնդիրների նախապատրաստական վարժությունները անցնենկացվում հրամատարական պարապմունքներում, դասակի հրամատարի ղեկավարությամբ, և այդ խնդիրների մի մասն այնուհետև մշակում է ջոկն ամբողջությամբ վերցրած:

4. Բոլոր պարապմունքներում հատուկ ուշադրություն պետք է դարձնել հետախուզության խնդիրները առաջադրելու ստույգության վրա:

5. Պարապմունքները կազմակերպում և անմիջորեն անց է կացնում հեծյալ հետախույզների դասակի հրամատարը:

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ (հեծյալ)

ՑԵՐԹՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախ քան խնդրի մշակումը, կրկնվում են ԿՄԾ 7–21 հոդվածները, Հեծելազորի մարտական կանոնագրքի 1–ին մասի և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի»անհրաժեշտ հոդվածները:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1. Ստուգել ջոկի հրամատարին, թե ինչ չափով է կարողանում.

ա) կատարել ջոկը յերթի համար պատրաստ լինելու ստուգումը.

բ) կատարել ջոկի պանազան վերաշարումներ.

գ) կազմակերպել՝ զորքերը յերթում պահպանելու համար դեռքի կազմի մեջ նշանակված ջոկի աշխատանքը.

դ) պահել առանց ճանապարհների շարժման ժամանակ ցույց տրված ուղղությունը.

ե) ժամանակին տալ ոդային ու քիմիական վտանգների մասին սահմանված ազդանշանը.

զ) կազմակերպել պաշտպանությունն ավիաքիմհարձակումից.

2. Ստուգել, թե ինչ չափով գիտեն.

ա) ԿՄԾ 8, 10, 12, 14, 15, 18, 20–րդ հոդվածները.

բ) Հեծելազորի մարտական կանոնագրքի 1–ին մասի անհրաժեշտ հոդվածները.

Գնահատականը— «Գերազանց»– յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 2 տուգանային աչկո:

«Լավ»–յերբ հրամատարը կատարել է քըն-

նական վարժության պահանջները, ստանալով հրամատար-ղեկավարից վոչ ավելի, քան մեկ ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 4 տուգանային աչկո:

«Բավարար»— նույնը, վոչ ավելի, քան յերկու ուղղում, իսկ կարմիր բանակայիններ-ը՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աչկո:

Անցկացման կարգը.—Ստուգումը կատարվում է դպոշտում: Ջոկը ստանում է ղեկավարից կոնկրետ խնդիր և անցնում է նրա կատարման: Միջանկյալ խնդիրները տրվում են ղեկավարի ոգնականի կողմից:

«ա» կետից ստուգումը կատարվում է նախ քան դաշտ դուրս գալը. «բ» կետից՝ վարժական հրապարակում (պլաց):

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

ա) մարտիկների պատրաստ չլինելը յերթի համար.

բ) շարժվելիս, դիտողություն վարել չկարողանալը.

գ) հրամաններ տալու ստույգության բացակայությունը, և դրա հետևանքով մարտիկների կողմից հրամանների թմրած կատարելը.

դ) պահպանվող զորամասերին վտանգի մասին ժամանակին իրազեկ չդարձնելը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-ամ(աս). Ջոկի հրամատարի մեջ մշակել ունակություններ՝ զննելու մարտիկների ու ձիերի պատրաստությունը յերթի համար:

Վարժությունն անց է կացվում գործնական ձևով, դասակի հրամատարի ղեկավարությամբ: Վերջինս, շարելով դասակը, զննում է նրան անձամբ, նշելով բոլոր թերությունները, բայց վոչինչ չասելով թերությունների մասին: Այնուհետև հրամայում է ջոկերի հրամատարներին նույնն անել իրենց ջոկերում և արդյունքների մասին զեկուցել: Վարժությունը կրկնվում է պարապմունքի դուրս գալուց առաջ այնքան ժամանակ, մինչև վոր ջոկի հրամատարները կսովորեն արագ ու ճիշտ ստուգել ջոկի պատրաստությունը յերթի համար:

1-բմ(բս). Ջոկի ու նրա հրամատարի կողմից յերթի համար շարքերի և դետոնում ջոկի շարժման համար կարգերի յուրացումը:

Վարժության նպատակն է՝ հրամատարի կողմից ջոկի շարքերի ու կարգերի ուսումնասիրությունը, շարումների ու վերաշարումների ստույգ կատարումը՝ համապատասխան հրամաններ տալով: Վարժության պատրաստությունն սկսվում է նստվածքի յուրացման մոմենտից և անց է կացվում ամբողջ տարվա ընթացքում:

1-գմ (վս). Մշակել ունակություններ ջո-

կի հրամատարի ու կարմիր բանակայինների մեջ ջոկի աշխատանքի համար, վորպես դետ յերբում զորքերի պահպանության մեջ:

Վարժության նպատակն է.— 1) սովորեցնել ջոկի հրամատարին և ամբողջ ջոկին պահպանել ցույց տված ուղղությունն ու տեմպը՝ առանց ճանապարհների քարժման ժամանակ, զուգընթացաբար զննելով տեղանքը. 2) սովորեցնել ջոկի հրամատարին պահել տեղական կապ հետևակային զորամասերի հետ և ոգտվել ամենապարզ հրամաններ ու զեկուցագրեր ստանալու ու փոխանցելու համար լուսազդանշանային ու ձայնական նշանարարությունից, ինչպես նաև պայմանական նշաններից. 3) սովորեցնել արագ փոխանցել պահպանվող զորքերին ոգտային ու տանկային վտանգի ազդանշանները: Վարժությունը մշակվում է ջոկի հրամատարի կողմից փոքրիկ թռուցիկ խնդիրներ լուծելու ձևով, իսկ շարժման մարզանքը և նշանարարություն ընդունելու ու փոխանցելու մարզանքը կատարվում է ամբողջ ջոկի կազմով դաշտում:

Ազդանշաններն արագ փոխանցելու մեջ դիտակալների ու ջոկի մարզանքն ապահովվում է նրանով, վոր դիտակալներին կցվում են ղեկավարի ոգնականներ (մարտիկներ մի այլ ջոկից), վորոնց վրա պարտականություն է դրվում՝ հանձնել միջանկյալ տվյալներ ավիացիայի կամ տանկերի մասին՝ դասակի հրամատարի կողմից վաղորոք սահմանված պլանով:

Բոլոր պահանջների ճիշտ ու ստույգ կատարումից հետո, ջոկը փոխարինվում է մի այլ ջոկով, իսկ առաջին ջոկից վերցնում են ոգնականները: Ավիացիայի ու տանկերի հայտարերման դեպքում՝ ջոկը մարտի չի բռնվում, այլ քաղարկվում է ու դիտում:

Պարապմունքները ղեկավարում է դասակի հրամատարը:

ԽՆԴԻՐ ՅԵՐԿՐՈՐԴ (հեծջոկ)

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ

Նախ քան խնդրի մշակելը, պետք է կրկնել ԿՄԾ 3, 6, 54–68 հոդվածները. Հեծելազորի մարտական կանոնագրքի անհրաժեշտ հոդվածները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» հոդվածները:

Քննական ու նախապատրաստական վարժություններն անց են կացվում ճիշտ՝ ջոկի համար 9-րդ խնդրի համեմատ (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին), ավելացնելով մի վարժություն (2-ամ-աս).

Գիտելիքների ստուգման ժամանակ հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասը փոխարինվում է հեծելազորի մարտական կանոնագրքի համապատասխան պարագրաֆներով:

2-ամ (աս). Մշակել ուսուցություններ հրամատարի ու նրա ջոկի մեջ խիզախ գրոհ կատարելու համար՝ գերելու և վոչնչացնելու

(յեթե դիմադրում են) հակառակորդի հետախույզների փոքր խմբակներին։

Վարժությունն անց է կացվում դաշտում և նպատակ ունի մշակել ամբողջ ջոկի կամ նրա մի մասի գործողությունների խիզախություն և արագություն, յերբ գերի յեն վերցվում հակառակորդի առանձին խմբակները։ Մարզանքը պետք է կատարվի պայմանորեն նշված հակառակորդի դեմ (թուփ, խոտի դեզ, վոստեր կամ ծղոտի փունջ, վորոնք դրվում են հատուկ ուղարկած մարտիկի ձեռքով)։

Վորչափ ավելի հաճախ կանցկացվի նման մարզանք, այնքան ավելի ջոկը կկոփվի ու կզոդվի այն խնդիրների կատարման մեջ, վոր դրվելու յեն նրա վրա հետախուզության չրջանում։

ԽՆԴԻՐ ՅԵՐՐՈՐԴ (հեծջոկ)

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Անց է կացվում հրաձգային ջոկի 2-րդ խնդիրը, բացառությամբ 2-բ (բ) նախապատրաստական վարժության (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին)։

Ծանոթություն.— *3-րդ խնդրի յուրացման պարապմունքն անց է կացնում դասակի հրամատարը, դասակից կազմելով մի հրաձգային ջոկ։*

ԽՆԴԻՐ ՉՈՐՐՈՐԴ (հեծջոկ)

ՋՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անց է կացվում հրաձգային ջոկի 3-րդ խնդիրը (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին).

Ծանոթություն.— *4-րդ խնդրի յուրացման պարապմունքներն անց է կացնում դասակի հրամատարը, դասակից կազմելով մի հրաձգային ջոկ։*

ԽՆԴԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ (հեծջոկ)

ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԳՆԴԱՅՐԱՅԻՆ ՈՒ ՀՐԱՅԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ ԿՐԱԿԻ ՎՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԳՐՈՀԻ ՀԱՄԱՐ ՅԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՎԵԼՈՒ ՄՈՄԵՆՏԸ

Անց են կացվում ջոկի համար 5-րդ խնդրի (բացառությամբ 5-ե (դ). քննական ու նախապատրաստական վարժությունները (տես ՀՏՊՄ—33, մասն 1-ին)։

Ծանոթություն.— *5-րդ խնդրի յուրացման պարապմունքներն անց է կացնում դասակի հրամատարը, դասակից կազմելով մի հրաձգային ջոկ։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԱՐՏԻԿ-ՀԵՏԱԽՈՒՅԶԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Եջ.

Ընդհանուր ցուցումներ 3

Մասնագիտական խնդիր. հեծյալ պատրաստություն. խնդիրներ. 1. Յերթն ու նրա պահպանությունը. 2. Հետախուզություն. 3. Պաշտպանության կազմակերպումը. 4. Մարտիկի գործողությունները պաշտպանության մեջ. 5. Հարձակում. 6. Մարտիկի աշխատանքը պահպանության մեջ . . . . . 4—34

Բ. ՀՐԱՄԱՏԱՐԻ ՈՒ ՆՐԱ ԶՈԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր ցուցումներ 35

Խնդիրներ—1. Յերթն ու նրա պահպանությունը 2. Հետախուզության կազմակերպումն ու վարումը. 3 և 4. Պաշտպանության կազմակերպումը և գործողությունները պաշտպանության մեջ. 5. Հարձակումը գնդացրային ու հրացնային դրոշան կրակի վորտրում . . . . . 36—43

ՄԵՏ ԿԱՌ ԳՐ. ԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արա ՍՍՌ
Ա. ԿՄ. Ա. Մասիսյանի

ՀՀ Ազգային գրադարան
NL0218742

42.396

ԳԻՆԸ 30 Կ.

1
2

Методика тактической подготовки пехоты

ч. II

подготовка бойца-разведчика

Госиздат ССР Армении
Эривань—1933 г.